

# ՄԷՋՄՈՒԱԷԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL  
MEDJMOUA - I - AHBAR  
Grand'Rue de Pera 65

Համբարսալիսեմա համի ՉԱՐՇԵՆՊԻՆ վե ճՈՒՄԱԽ ԻՐԹԻՍԻ  
կիսնիքի մեջ ողմուր:

مجموعه اخبار  
بك اوغلي تقسيم جادى نمبر 70

Ղազէթահա միւթէալիդ խոստումաթ իշին ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՕԼԱՅԵԱՆԱ միւրաճապթ օլունու. — Իտարէխանէ՛ Պէյօղլունտա ճատտէի քէպիրտէ ն 9 63

## ԿՐՈՆԱԿԱՆ ՄՏԱՆՈՒՄՆԵՐ

Անցեալները՝ դարձեալ այն սիւնակներուն մէջ էր որ կը կարգայի Սրբազան Քահանայապետին այն ճառը, զոր իւր պատասխան, արտասանած էր՝ իր Ծնունդին ու Թագադրութեան տարեդարձին առթիւ։ Այդ ճառին մէջ ամէնէն աւելի ուշադրութիւնս գրաւեց այն հատուածը, որ ինչպէ՛ք ճշմարիտ, այնչափ ալ աղուոր ու վաճմէ՛։

«Այո՛, անուրանալի է թէ բնորոշ եկեղեցւոյ, որոյ նպատակն ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մարդկային ընկերութեան բարիք ընել, հանապաղ լրբութիւնք, զրպարտութիւնք եւ սոցին նման անբարիքաւ նենգութիւնները՝ անպատու հաս ազատ քայլ կ'առնեն։ Սոյն չարութեանց գլխաւոր պաշտօնականներն են ժամկտ եւ անօրէն ազանդները (setta), որոնք որքան բազմաճիւղ են յիշեցան՝ սակայն բոլոր իւր գաղտնի ձեւքն մը զրգեալ կը միաբանին յարձակիլ կաթողիկէայ Սիւրբառութեան վրայ, կը տենչան, եթէ կարելի է, խել, հանել ազգաց սրտերէն, որպէս զի յետոյ կարենան յաջողիլ յոռեգոյն նպատակաւ... Ո՛չ, չվախնանք երբեք եկեղեցւոյ նկատմամբ, զի սա անզրդուելի, եւ անյաղութիւն է ըստ աստուածային խոստմանց եւ ոչ նոր բան մըն է եկեղեցւոյ համար ապերախութիւններ, հակառակութիւններ, վշտեր, հալածանքներ, ուստի վարժ է այսպիսի հանգամանքներէն ամբողջութեամբ եւ անվեհեր արիւթեամբ փառաց պօռկներ հիւսել։»

Թիւստ շատ անգամ է նոյն իսկ հմուտ ու զարգացած կարծուած անձերու բերնէն լսած եմ թէ՛ կաթողիկէ եկեղեցին՝ իր առջի ազդեցութիւնը, իր առջի ուժը կորսնցնելու վրայ է տակաւ, թէ Սրբազան Քահանայապետը կամ աւելի ճիշդը Պապութիւնը չի գրաւեր այսօր այն տեղը, որ զրաւած էր դար մը, երկու դար առաջ։ Ընթերցող, խոստովանէ որ դուն ալ մէկէ շատ աւելի անհաճանք լսած ես այս խօսքերը անհանկ մարդէն բերնէն որոնցմէ բընաւ այս տեսակ խօսք մը չէիր ըսպասեր։ Այդ տեսակ մարդիկը յիշեցնել կուտան ինծի այն անհաւատ փիլիսոփան որ կեցած տեղը, առանց պատճառ մը ունենալու եւ նոյն իսկ առանց ո՛ր է բացատրութեան կ'արձակէ դիւային, հրէշային վճիռ մը, զոր մեկնելու, պաշտպանելու պէտք մը չիգգար կարծես։ Աստուծոյ գոյութիւնը չընդունիր գերման յոռեւտեա ու յուսահատ իմաստասէրը Նիձէ, այլասեռած ու հիւանդ իմաստասէրը, որուն չորենհաւըրեան ապականած ու աղտոտ տրամաբանութիւնները ամբողջ անցեալ ու ապագայ սերունդը

ներս միտքը լեցուց ու պիտի լեցնէ տակաւ Նիձէ, իր չեմ գիտեր որ հակաքրիստոսական ու անհաւատ գործին մէջ է որ կ'աճապարէ տեւազեքներու Սրբորիշին գոյութիւնը ուրանալ ինչո՞ւ, ինչո՞ւ այս ճիշդ, ինչո՞ւ այս պոռչուտքը, որովհետեւ գերմանացի յոռեւտեա ու եսամոլ փիլիսոփան իրմէ աւելի մեծի մը գոյութիւնը չի կրնար հանդուրժել, ուրովհետեւ իր մէկ հատիկ ըղձանքը ատէ՛ պէտք որ գոյութիւն չունենայ Ան, որպէս զի ա՛լ կարենայ ազատ ապրիլ, առանց իր գլխին վերայ՝ սպառնացող ու պատժող սուրի մը ճոճումը զգալու, այո՛, պէտք է որ չըլլայ Ան, որպէս զի ա՛լ հանգեւրծեալ կեանքի մը ահաւոր ուրուականը փարատի, որպէս զի ա՛լ չնշուի «պատիժ թէ վարձատրութեան», ապրի՛լ թէ մեռնելու՝ մըշտընիկական արհաւիրքը, որ բոլոր համրիւքեան սկեպտիկ ու մեկամաղձոտ հոգիները կը վրդովէ ու կ'ալեկոծէ։ Համբողջ անգլիացի հրաշալի ողբերգակ՝ Շեքսպիրին այդ տարօրինակ ու միանգամայն աննման ըստեղծագործութիւնը, որ թէպէտ բանաստեղծին ամէնէն մեծ գլուխ գործոցը կը համարուի, սակայն ամբողջ յուսահատութիւն, մեկամաղձոտութիւն, սկեպտիկութիւն կը ներկայացնէ մարմնացած։ Այդպիսիներու բոլոր իտեալը ուրիշ բան չէ, բայց միայն հանդերձեալ կեանքին գոյութիւնը ուրանալ, որովհետեւ այն ժամանակ պիտի կարենան ազատ շունչ մը առնել պիտի կարենան ուղածին պէս կեանք մը վարել վերջապէս բոլոր ուղածին ընել որովհետեւ վերէն Ղիտող մը, իրենց բոլոր գործերը քըննող մը ու դատող մը չկայ։

Եւ բոլոր անոնք որ եկեղեցիին անկումը, տկարացումը նշմարել կը կարծեն, չեմ գիտեր ի՞նչ արտաքին կամ ներքին երեւոյթներու մէջէն, իրենց տենչանքն է միայն որ կը յայտնեն։ Իրենք ա՛յդպէս կը փափաքին, ա՛յդպէս տեսնել կ'ուզեն եւ, ի՞նչ կրնաք ըսել, այդպէս ալ կը տեսնեն։ Բայց, մենք այդչափ իրաւունք պիտի չունենայինք իրենց սոյն տեսողութեանը մասին բան մը առարկելու — որովհետեւ մարդ ազատ է ուղածը մտածել այս կամ այն խընդիրներու մասին — եթէ չտեսնայինք ամէն օր թէ այդ մարդիկը միմիայն իրենք տեսնելով չեն գոհանար, այլ կ'ուզեն, կը ջանան նաեւ դիմացինին համոզել։

Կը յիշեք անշուշտ այն հալածանքները, այն անլուր տանջանքները եւ

տակաւին հաղար ու մէկ երեւակաւ յելի ու աներեւակայելի բաները զոր կրած է Քրիստոսի Կաթողիկէ եկեղեցին անցեալ հին դարերու ընթացքին մէջ։ Քսան դար դէպի ետ ալ նարկ մը նետեցէք անգամ մը, երեւակայութիւննիդ փոխադրեցէք ճիւղ ներոններու հրէշային տիրապետութեան ժամանակը, ուր Քրիստոսի բոլոր հետեւորդները ստիպուած էին գետնափորներու մէջ հաւաքուիլ մահուան սպառնալիքին տակ, ուր քրիստոնեայ մը, որչափ ալ բարի ու բարեպաշտ ըլլար, մահուան արժանի յանցաւոր մը, մեղապարտ մը կը համարուէր՝ միմիայն Քրիստոսի աննշման վարդապետութիւնը ընդունած ըլլալուն համար, ուր՝ արիւնաթաթախ կրկեսին մէջ, առիւծներու, գայլերու տաշիւ — ահագին ամբոխներէ չըջապատուած — կը նետուէր այն թշուառ քրիստոնեան որ մերժելով դիցաբանական կեղծ չաստուածները ու իւր չաստուածոհիները՝ կը ծնրադէր աղօթելու համար տիեզերքի մէկ հատիկ Աստուծոյն, երեւակայեցէք այս բարբառոսային ժամանակները, ուր այս եւ ասոնց նման քստմնելի հալածանքները անպակաս էին, եւ սակայն Յիսուսի Քրիստոսի կրօնքը, Աստուծոյ դիւին աննման վարդապետութիւնը եւ Աստուծոյ մէկ հատիկ Կաթողիկէ եկեղեցին, բոլոր այդ հալածանքներուն մէջէն յառաջացաւ, փառքէ փառք, յաղթանակէ յաղթանակ ուղղուեցաւ եւ վերջապէս երկնի ՉԱՐՇԱՐ տարիներու ընթացքին մէջէն հասաւ այսօր անանկ գաղաթնակէտի մը վրայ ուրկէ զայն սահեցնել՝ ո՛չ միայն անհնարին, այլ նոյն իսկ ատոր կաթողիկէան վրայ պահ մը տարակուսիլ՝ յիմարական ցափուտաւ մը, տխրահալան ցնորք մըն է...

Եկեղեցին, երբեմն փոթորկալից ու երբեմն ալ խաղաղիկ ծովու մը, ովկէանոսի մը վրայէն քալած, երբեմն ալ ծովերու յատակը իջած, երբեմն ալ լեռներու գագաթը հասած, եւ վերջապէս այսօր, քսան դարէ ետք այնչափ հաստատ հիմքերու վրայ կեցած է, որ ամէն հովէ, ամէն փոթորիկէ ու ամէն վտանգէ զերծ է։

Այս լուսաւորեալ դարուն մէջ, ուր գիտութիւն ու գրականութիւն, արհեստ ու գեղարուեստ իրարու հետ կը մրցին, ուր մարդկային իմացականութիւնը իր ամէնէն բարձր աստուածացումին կատարը կը հասնի օրէ օր, ուր, դար մը առաջուան բոլոր անկարգի կարծուած բաները կարելի

եղած են եւ «անկարելի» բառը գիտական գիրքերու մէջէն պիտի չընջուի տակաւ, ուր՝ այլ եւ այլ իմաստականութիւններու եւ աղանդներու այլաբան խառնիճաղանջութիւնն իր յոռի ազդեցութիւնն պիտի կորսնցնէ ճշմարիտ գիտութեան առջեւ, այո՛, այս զարգացած «գիտութեան Դարուն» մէջ, կ'ըսեմ, Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին իր լայնատարած թեւերը աշխարհիս ամէն անկիւններուն վրայ տարածած է ու կը տարածէ տակաւ իսկ անոր բարիքները ամէն կողմ սփռուած է։ Թերեւս ասկէ առաջ նիւրապէս աւելի փայլուն, աւելի նախանձելի վիճակ մը ունէր, կը գուշակէ՛ք ըսածս, չեմ պնդեր, իմ խօսքս նիւթականին համար չէ, ես մի միայն թարգմանում եմ, թիւ, թարգմանում ազդեցութեանը վրայ կը խօսիմ։ Եւ, ըսէ՛ք, նիւրապէս մը կը նախընտրէ՛ք թարգմանիւն։ չեմ կարծեր որ հաստատական պատասխան մը տաք, բայց ինչ որ ալ ըլլայ իրաւունք ունի մեր ալեւոր Ս. Քահանայապետ երբ կ'ըսէ.

«Ոչ, չվախնանք երբեք եկեղեցւոյ նկատմամբ, «Ձի սա անզրդուելի եւ անյաղաքելի է ըստ աստուածային խոստմանց...»

Ե. Թ.

## Ա.ԶԳԱՅԻՆ

Բաղար կիւնիւ Ս. Յովհան Ոսկեբերան քիլիսէսի սալօնքնտա, մէգքիւր քիլիսէնին եէնի Թաղ. Խորհուրդըն ինթիլիապընա մախսուս օլան գուրալարըն թաատատ մուամէլէսի իճրա իտիլիշ տիր. Պու մուամէլէսէ Իտարէ մէճիսի աղասընտան Սընաւոր Անտոն էֆ. իլէ Էնքսէրճեան Մըկըրտիլ էֆ. վէ Մեծ-Թողդրդապետ Գիւլ. Նիկողայոս Մ. Վ. Պագչեան իլէ միւտոթիլ մէ մուրիեթիլ խիթամ պուլան վէ էսկի Թաղ. Խորհուրդաղալար օլան Բէօմիւրճեան Միքայէլ, Քէրիմեան Կոմիտաս, Կիւմիւրճեան Յովսէփ վէ Ստեփանեան Միհրան էֆ. իլէր վէ սաիր պաղը զէվաթ հաղըր պուլունուպ, էվվէլէ, գուրա բուսուլարընը հալի օլան մէօհիւրլիլ գուլթու, — պատէլ մուայիէնէ, մուսթապամ պուլունուտուղու անլալըլթըտան սոնրա, — ալըլըլ, վէ քէնտիլէրինէ գուրա բուսուլարը կէօնտէրիլէն միւնթէիլպլէրտէն սըլնան 123 բուսուլանըն զարֆլարը իպթալ գըլընըպ, պատէհու թաատատ մուամէլէսի իճրա իտիլէրէք, աթիտէքի նէթիճէ հասըլ օլմուշ տուր.











